ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 717 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N 690-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի հուլիսի 22-ի «Ջրային ոլորտի ռազմավարության մշակման, ոլորտում արձանագրված խնդիրների և դրանցից բխող գործողությունների ծրագիր մշակելու նպատակով միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 690-Ա որոշման 2-րդ կետով հաստատված N 1 հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հավելված N 1
ՀՀ վարչապետի N 690 - Ա որոշման

Կ Ա Զ Մ
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1. Ոլորտը համակարգող փոխվարչապետ (աշխատանքային խմբի ղեկավար)
2. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
3. Շրջակա միջավայրի նախարար
4. Էկոնոմիկայի նախարար
5. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)
6. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ համապատասխան ոլորտը համակարգող անդամ (համաձայնությամբ)
7. Վարչապետի խորհրդական
8. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալ
9. Ներքին գործերի նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալ
10. Շրջակա միջավայրի նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալ
11. Էկոնոմիկայի նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալ
12. Ֆինանսների նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալ
13. Ձրային կոմիտեի նախագահ
14. Երևանի քաղաքապետի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալ (համաձայնությամբ)
15. Փոխվարչապետի խորհրդական
16. Ձրային կոմիտեի նախագահի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալներ
17. Ձրային կոմիտեի ներկայացուցիչ (աշխատանքային խմբի քարտուղար)»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

30.07.2024

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ